

**Խորհրդի 2010 թվականի մայիսի 10-ի 2010/32/ԵՄ հրահանգ**

**ՀԱՀԱԵԱ-ի և ՀԾՄԵՖ-ի կողմից ընդունված՝ հիվանդանոցներում և առողջապահության համակարգում սուր գործիքներից ստացված վնասվածքների կանխման վերաբերյալ շրջանակային համաձայնագրի իրականացման մասին**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագիրը և, մասնավորապես, դրա 155 (2) հոդվածը,

հաշվի առնելով Եվրոպական հանձնաժողովից ստացված առաջարկը,

Քանի որ

1) «Եվրոպական միության գործունեության մասին» (ԵՄԳՄ) պայմանագրի 155 (2) հոդվածի համաձայն սոցիալական գործընկերները կարող են համատեղ պահանջ ներկայացնել, որ Միության մակարդակով ԵՄԳՄ 153-րդ հոդվածում ներառված հարցերի վերաբերյալ իրենց կողմից կնքված համաձայնագրերն իրականացվեն Խորհրդի որոշմամբ՝ Հանձնաժողովից ստացված առաջարկի հիման վրա,

2) 2008 թվականի նոյեմբերի 17-ի նամակով Եվրոպական սոցիալական գործընկերների կազմակերպությունները՝ ՀԱՀԱԵԱ-ն (Հիվանդանոցների և առողջապահության համակարգի աշխատողների Եվրոպական ասոցիացիա)՝ աշխատողներին ներկայացնող ոլորտային կազմակերպությունը, և ՀԾՄԵՖ-ը (Հանրային ծառայությունների միության Եվրոպական ֆեդերացիա)՝ արհմիութենական Եվրոպական կազմակերպությունը, Հանձնաժողովին տեղեկացրեցին «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագրի (ԵՀ պայմանագիր) 138(4) հոդվածի և 139 հոդվածի համաձայն բանակցություններ սկսելու իրենց ցանկության մասին [1]՝ նպատակ ունենալով հիվանդանոցներում և առողջապահության համակարգում կնքելու սուր գործիքներից ստացված վնասվածքների կանխման մասին շրջանակային համաձայնագիր,

3) 2009 թվականի հուլիսի 17-ին Եվրոպական սոցիալական գործընկերները ստորագրեցին «Հիվանդանոցներում և առողջապահության համակարգում սուր գործիքներից ստացված վնասվածքների կանխման մասին» շրջանակային համաձայնագրի տեքստը,

4) սույն Հրահանգի նպատակը հնարավորինս ապահով աշխատանքային միջավայր ստեղծելն է բժշկական սուր գործիքներից, այդ թվում՝ ներարկումներից ստացված՝ աշխատողների վնասվածքների կանխման և հիվանդանոցի ու առողջապահության համակարգի ռիսկային գոտում աշխատող աշխատողների պաշտպանության միջոցով, չի կարող բավարար չափով իրականացվել անդամ պետությունների կողմից, և, հետևաբար, առավել լավ կիրականացվի Միության մակարդակով, ապա Միությունը կարող է ընդունել միջոցներ՝ «Եվրոպական միության մասին» պայմանագրի 5-րդ հոդվածով սահմանված սուբսիդիարության սկզբունքին համապատասխան: Վերոհիշյալ հոդվածում նշված համաչափության սկզբունքի համաձայն՝ սույն Հրահանգը չի անցնում վերոհիշյալ նպատակների իրականացման համար անհրաժեշտ շրջանակը,

5) հրահանգի նպատակով առաջարկ մշակելիս՝ Հանձնաժողովը հաշվի է առել համաձայնագիրը ստորագրող կողմերի ներկայացուցչականությունը, որպես հիմք ընդունելով համաձայնագրի գործողության շրջանակը հիվանդանոցների և առողջապահության համակարգի համար: Հանձնաժողովը հաշվի է առել նաև շրջանակային համաձայնագրի օրինականությունը և ստորագրող կողմերի լիազորությունները, ինչպես նաև համաձայնագրի համապատասխանությունը փոքր ու միջին ձեռնարկություններին վերաբերող համապատասխան դրույթներին,

6) Հանձնաժողովը տեղեկացրել է Եվրոպական պառլամենտին ու Տնտեսական և սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեին իր առաջարկի մասին,

7) Եվրոպական պառլամենտը 2010 թվականի փետրվարի 11-ին որոշում ընդունեց այդ առաջարկի վերաբերյալ,

8) շրջանակային համաձայնագրի 1-ին դրույթում սահմանված կարգով համաձայնագրի նպատակը սոցիալական քաղաքականության նպատակներից մեկն իրականացնելն է, մասնավորապես՝ աշխատանքային պայմանների բարելավումը,

9) 11-րդ դրույթը անդամ պետություններին և Համայնքին (2009 թվականի դեկտեմբերի 1-ից՝ Միությանը) թույլ է տալիս պահպանել և ներմուծել այնպիսի դրույթներ, որոնք ավելի նպաստավոր են բժշկական սուր գործիքներից ստացված վնասվածքներից աշխատողներին պաշտպանելու համար,

10) սույն Հրահանգով սահմանված պարտավորությունների խախտման դեպքում անդամ պետությունները նախատեսում են արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ պատժամիջոցներ,

11) անդամ պետությունները կարող են համատեղ պահանջով սոցիալական գործընկերներին հանձնարարել սույն Հրահանգի կիրարկումը՝ պայմանով, որ անդամ պետություններն անհրաժեշտ քայլեր ձեռնարկեն՝ սույն Հրահանգով նախատեսված արդյունքների կատարումն ապահովելու համար,

12) «Բարելավված օրինաստեղծ գործունեության մասին» միջինստիտուցիոնալ համաձայնագրի 34-րդ կետին համապատասխան՝ [2] խրախուսվում է, որ անդամ պետությունները, իրենց և Համայնքի շահերից ելնելով, կազմեն իրենց աղյուսակները, որոնք հնարավորության սահմաններում ցույց կտան սույն Հրահանգի և փոխատեղման միջոցների միջև փոխկապակցվածությունն ու հրապարակեն դրանք,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

#### *Հոդված 1*

Սույն Հրահանգով իրականացվում է «Հիվանդանոցներում և առողջապահության համակարգում սուր գործիքներից ստացված վնասվածքների կանխման մասին» շրջանակային համաձայնագիրը, որը ստորագրվել է ՀԱՀԱԵԱ-ի և ՀԾՄԵՖ-ի կողմից 2009 թվականի հուլիսի 17-ին՝ հավելվածում սահմանված կարգով:

#### *Հոդված 2*

Անդամ պետությունները սահմանում են սույն Հրահանգի համաձայն ընդունված ազգային դրույթների խախտման դեպքում կիրառվող պատժամիջոցները: Նշված պատժամիջոցները պետք է լինեն արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ:

#### *Հոդված 3*

1. Անդամ պետությունները գործողության մեջ են դնում սույն Հրահանգին համապատասխանեցնելու համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը և վարչական դրույթները, կամ ապահովում են, որ սոցիալական գործընկերները համաձայնագրով նախատեսված անհրաժեշտ միջոցներ ներմուծեն ամենաուշը մինչև 2013 թվականի մայիսի 11-ը: Նրանք դրա մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

Եթե անդամ պետություններն ընդունում են այդ դրույթները, դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին կամ իրենց պաշտոնական հրապարակման դեպքում՝ պետք է ուղեկցվեն նման հղումով: Անդամ պետությունները սահմանում են նման հղում կատարելու ձևը:

2. Անդամ պետությունները Հանձնաժողովին փոխանցում են ազգային իրավունքի հիմնական դրույթների տեքստը, որը նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող համակարգում:

#### *Հոդված 4*

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո 20-րդ օրը:

#### *Հոդված 5*

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում 2010 թվականի մայիսի 10-ին:

Խորհրդի կողմից՝

Նախագահ Ա. Գոնգալես-Սինդ Ռեյզ

[1] Վերահամարակալվել են՝ ԵՄԳՄ-ի 154 (4) և 155 –րդ հոդվածները:

[2] ՊՏ C 321, 31.12.2003թ., էջ 1:

-----

## ՀԱՎԵԼՎԱԾ

### ՀԻՎԱՆԴԱՆՈՑՆԵՐՈՒՄ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՍՈՒՐ ԳՈՐԾԻՔՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՆԽՄԱՆ ՄԱՍԻՆ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

#### Ներածություն

1. Աշխատավայրում առողջությունը և անվտանգությունը մի խնդիր է, որը հույժ կարևոր պետք է լինի յուրաքանչյուրի համար հիվանդանոցներում և առողջապահության համակարգում: Անցանկալի վնասվածքները կանխելուն և դրանցից պաշտպանվելուն ուղղված գործողությունների պատշաճ իրականացումը դրական ազդեցություն կունենա ռեսուրսների վրա:

2. Աշխատողների առողջությունը և անվտանգությունը հույժ կարևոր է, այն սերտորեն փոխկապված է հիվանդների առողջության հետ:

Սրանով մեծապես պայմանավորված է բժշկական խնամքի որակը:

3. Բժշկական սուր գործիքների վերաբերյալ քաղաքականության մշակման և իրականացման գործընթացը պետք է լինի սոցիալական երկխոսության արդյունք:

4. ՀԱՀԱԵԱ-ն (Հիվանդանոցների և առողջապահության համակարգի աշխատողների եվրոպական ասոցիացիա) ու ՀԾՄԵՖ-ն (Հանրային ծառայությունների միության եվրոպական ֆեդերացիա)՝ հիվանդանոցների և առողջապահության համակարգի ճանաչված եվրոպական սոցիալական գործընկերները համաձայնեցին հետևյալի մասին.

Ընդհանուր տեղեկություններ

1. հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և, մասնավորապես, դրա 138-րդ և 139(2) հոդվածները [1],

2. հաշվի առնելով ԽՈՐՀՐԴԻ «Աշխատավայրում աշխատողների անվտանգության ու առողջության բարելավմանն ուղղված միջոցառումների մասին» 1989 թվականի հունիսի 12-ի 89/391/ԵՏՀ հրահանգը,

3. հաշվի առնելով ԽՈՐՀՐԴԻ «Աշխատավայրում աշխատողների կողմից աշխատանքային սարքերի օգտագործման՝ անվտանգության և առողջության մասով նվազագույն պահանջների մասին» 1989 թվականի նոյեմբերի 30–ի 89/655/ԵՏՀ հրահանգը,
4. հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի և Խորհրդի «Աշխատավայրում կենսաբանական ազդակների ներգործության ռիսկերից աշխատողների առողջության և անվտանգության պահպանման մասին» [4] 2000 թվականի սեպտեմբերի 18-ի հրահանգը,
5. հաշվի առնելով «Աշխատավայրում առողջության և անվտանգության պահպանման մասին» 2007-2012 թվականների՝ Համայնքի ռազմավարությունը,
6. Եվրոպական համայնքում աշխատողներին տեղեկատվություն տրամադրելու և նրանց հետ խորհրդատվություն վարելու նպատակով ընդհանուր շրջանակ հաստատող՝ Եվրոպական պառլամենտի ու Խորհրդի 2002 թվականի մարտի 11-ի 2002/14/ԵՀ հրահանգը [6],
7. հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի «Ներարկումների հետևանքով վնասվածքներից առաջացած արյան վարակներից Եվրոպայի բուժաշխատողների պաշտպանության մասին» 2006 թվականի հուլիսի 6-ի որոշումը (2006/2015(INI)),
8. հաշվի առնելով ներարկումների հետևանքով վնասվածքներից առաջացած արյան վարակներից Եվրոպայի բուժաշխատողների պաշտպանության մասին Եվրոպական հանձնաժողովի առաջին և երկրորդ փուլի խորհրդակցությունները,
9. հաշվի առնելով «Ներարկումներից ստացված վնասվածքների մասին» ՀԾՄԵՖ–ՀԱՀԱԵԱ տեխնիկական սեմինարի արդյունքները, որը տեղի է ունեցել 2008 թվականի փետրվարի 7-ին,
10. հաշվի առնելով 89/391/ԵՏՀ հրահանգի 6-րդ հոդվածում սահմանված՝ կանխման ընդհանուր սկզբունքների ստորակարգությունը, ինչպես նաև 2000/54/ԵՀ հրահանգի 3-րդ, 5-րդ և 6-րդ հոդվածներում սահմանված կանխարգելման միջոցները,
11. հաշվի առնելով ՄԻԱՎ/ՁԻԱՀ և առողջապահական ծառայությունների մասին ԱՄԿ/ԱՀԿ համատեղ ուղեցույցները և նույն կազմակերպությունների՝ ՄԻԱՎ վարակը կանխարգելելու պրոֆիլակտիկայի մասին ուղեցույցները, երբ անձն արդեն ենթարկվել է ազդեցության,
12. պահպանելով ազգային առկա օրենսդրության և կոլեկտիվ համաձայնագրերի դրույթները,

13. քանի որ գործողություններ պետք է ձեռնարկվեն՝ գնահատելու համար հիվանդանոցներում և առողջապահության համակարգում սուր գործիքներից ստացված վնասվածքների դեպքերի թիվը. քանի որ գիտական փաստերը վկայում են, որ կանխիչ և պաշտպանիչ միջոցները կարող են էականորեն նվազեցնել նման դեպքերի ու վարակների թիվը,

14. քանի որ ռիսկերի գնահատման համապարփակ գործընթացը նախապայման է՝ վնասվածքները և վարակը կանխարգելելու նպատակով համապատասխան քայլեր ձեռնարկելու համար,

15. քանի որ գործատուները և առողջության ու անվտանգության պահպանման հարցերով աշխատողների ներկայացուցիչները պետք է համագործակցեն՝ աշխատողներին բժշկական սուր գործիքներից ստացված վնասվածքներից ու վարակներից պաշտպանելու և նման դեպքերը կանխելու համար,

16. քանի որ սուր գործիքներից վնասվածքներ ստանում են հիմնականում, բայց ոչ միայն բուժաշխատողները,

17. քանի որ որպես իրենց կրթության մաս կլինիկական վերապատրաստում անցնող ուսանողները աշխատողներ չեն համարվում՝ սույն համաձայնագրի համաձայն, նրանց նկատմամբ պետք է կիրառվեն սույն համաձայնագրում նշված կանխման և պաշտպանության միջոցները՝ ենթադրելով այնպիսի պարտավորություններ, որոնք կարգավորվում են ազգային օրենսդրությամբ և գործելակերպով:

## **Դրույթ 1. Նպատակը**

Սույն շրջանակային համաձայնագրի նպատակն է՝

- ապահովել հնարավորինս անվտանգ աշխատանքային միջավայր.
- կանխել աշխատողների վնասվածքները, որոնք կարող են առաջանալ բժշկական բոլոր սուր գործիքներից (այդ թվում՝ ներարկիչներից).
- պաշտպանել ռիսկային գոտու աշխատողներին.

– ստեղծել համապարփակ մոտեցում, որը կսահմանի ռիսկի գնահատման, ռիսկի կանխման, վերապատրաստման, տեղեկատվության, իրազեկման բարձրացման և դիտանցման քաղաքականություններ:

– ունենալ արձագանքման և շարունակական ընթացակարգեր:

## **Դրույթ 2. Գործողության ոլորտը**

Սույն համաձայնագիրը կիրառվում է բոլոր այն աշխատողների նկատմամբ, որոնք աշխատում են հիվանդանոցներում և առողջապահության համակարգում ու բոլոր նրանց նկատմամբ, ովքեր գտնվում են գործատուների ղեկավար ենթակայության և վերահսկողության տակ: Գործատուները պետք է ջանքեր գործադրեն՝ ապահովելու համար, որ ենթակապալառուները պահպանեն սույն համաձայնագրում սահմանված դրույթները:

## **Դրույթ 3. Սահմանումները**

Սույն համաձայնագրի իմաստով.

1. Աշխատողներ՝ գործատուի կողմից հիվանդանոցների և առողջապահության համակարգին անմիջականորեն առնչվող ծառայություններով և գործունեությամբ զբաղվելու նպատակով աշխատանքի վերցված ցանկացած անձ, այդ թվում՝ վերապատրաստում անցնողները և փորձնակները: Այն աշխատողները, որոնք վերցվել են ժամանակավոր աշխատանքի Խորհրդի՝ որոշյալ ժամկետով կամ ժամանակավոր աշխատանքային պայմանագիր ունեցող աշխատողների՝ աշխատավայրում անվտանգության և առողջության բարելավումը խթանելուն ուղղված միջոցառումները լրացնող՝ 91/388/ԵՏՏ հրահանգի իմաստով, կարգավորվում են սույն համաձայնագրով:

2. Կարգավորվող աշխատավայր՝ հանրային և մասնավոր ոլորտներում առողջապահական կազմակերպություններ/ծառայություններ և ցանկացած այլ վայր, որտեղ առողջապահական ծառայություններ են մատուցվում կամ գործունեություն է իրականացվում՝ գործատուի ղեկավար ենթակայության և հսկողության ներքո:



3. Գործատու՝ ֆիզիկական/իրավաբանական անձ/կազմակերպություն, որն աշխատանքային հարաբերության մեջ է գտնվում աշխատողի հետ: Գործատուները պատասխանատու են առողջապահական ու առողջապահությանն անմիջականորեն առնչվող ծառայություններ մատուցելու, գործունեություն կառավարելու և կազմակերպելու հարցում, որոնք կատարվում են աշխատողների կողմից.

4. սուր գործիքներ՝ առողջապահական կոնկրետ գործողություններ կատարելու համար անհրաժեշտ առարկաներ կամ գործիքներ, որոնք կարող են կտրել, ծակել, վնաս հասցնել և (կամ) վարակել: Սուր գործիքները համարվում են աշխատանքային սարքեր՝ «Աշխատանքային սարքերի մասին» 89/655/ԵՏՀ հրահանգի իմաստով.

5. Միջոցների ստորակարգություն՝ սահմանվում է ռիսկերից խուսափելու, դրանք վերացնելու կամ նվազեցնելու արդյունավետության կարգով, ինչպես սահմանված է 89/391/ԵՏՀ հրահանգի 6-րդ հոդվածում, ինչպես նաև 2000/54/ԵՀ հրահանգի 3-րդ, 5-րդ և 6-րդ հոդվածներում.

6. կանխիչ հատուկ միջոցներ՝ վնասվածքը և (կամ) վարակի փոխանցումը կանխելու նպատակով ձեռնարկվող միջոցներ՝ հիվանդանոցներին կամ առողջապահության համակարգին անմիջականորեն առնչվող ծառայությունների և գործունեության ընթացքում՝ ներառյալ ամենաապահով սարքերն օգտագործելը՝ հիմնվելով ռիսկի գնահատման և բժշկական սուր գործիքներից ձերբազատումն ապահովող անվտանգության մեթոդների վրա.

7. Աշխատողների ներկայացուցիչներ՝ ցանկացած անձ, որն ընտրվել է քվեարկությամբ կամ ընտրությամբ կամ նշանակվել է աշխատողների շահերը ներկայացնելու համար՝ ազգային օրենսդրության և (կամ) գործելակերպին համապատասխան .

8. Աշխատողների առողջության և անվտանգության հարցերով ներկայացուցիչները սահմանվում են 89/391/ԵՏՀ հրահանգի 3(գ) հոդվածի համաձայն՝ որպես ցանկացած անձ, ով ընտրվել է քվեարկությամբ կամ ընտրությամբ կամ նշանակվել է ազգային օրենսդրության և (կամ) գործելակերպին համապատասխան՝ աշխատողների շահերը ներկայացնելու նպատակով, երբ աշխատավայրում աշխատողների անվտանգության և առողջության պահպանմանն առնչվող խնդիրներ են ծագում:

9. Ենթակապալառու՝ ցանկացած անձ, ով հիվանդանոցներին և առողջապահության համակարգին անմիջականորեն առնչվող ծառայություններ է մատուցում կամ գործունեություն իրականացնում՝ գործատուի հետ հաստատված աշխատանքային պայմանագրային հարաբերությունների շրջանակում:

#### **Դրույթ 4. Սկզբունքները**

1. Բավարար վերապատրաստում անցած, պատշաճ ռեսուրսներով համալրված և անվտանգ առողջապահական ծառայություններ մատուցող աշխատուժը կարևոր դեր ունի վնասվածքների և բժշկական սուր գործիքներից փոխանցված վարակների ռիսկը կանխելու հարցում: Ներգործության կանխումը մասնագիտական աշխատանքի ընթացքում ստացված վնասվածքների և փոխանցված վարակի ռիսկը վերացնելու կամ այն նվազագույնի հասցնելու հիմնական ռազմավարությունն է.
2. Առողջության և անվտանգության հարցերով ներկայացուցիչների դերը շատ կարևոր է ռիսկի կանխման և ռիսկից պաշտպանվելու հարցում.
3. Գործատուն պարտավոր է ապահովել աշխատողների անվտանգությունը և առողջությունը աշխատանքին առնչվող ցանկացած հարցում՝ ներառյալ հոգեբանական-սոցիալական գործոնները և աշխատանքի կազմակերպումը.
4. Յուրաքանչյուր աշխատողի պարտականությունն է հնարավորինս հոգ տանել իր սեփական և այլ անձանց անվտանգության ու առողջության համար, որոնց վրա կարող են ազդել աշխատանքի ընթացքում կատարվող գործողությունները՝ անցած վերապատրաստման և գործատուի կողմից տրված ցուցումների համաձայն.
5. Գործատուն ստեղծում է այնպիսի միջավայր, որտեղ աշխատողները և նրանց ներկայացուցիչները մասնակցում են առողջության ու անվտանգության ուղեգծերի և կարգերի մշակմանը:
6. Սույն համաձայնագրի 5-10-րդ կետերում նշված հետևյալ կանխիչ հատուկ միջոցների սկզբունքը երբեք չի բացառում ռիսկի հավանականությունը: Կիրառվում է 89/391/ԵՏՀ հրահանգի 6-րդ հոդվածի, ինչպես նաև 2000/54/ԵՀ հրահանգի 3-րդ, 5-րդ և 6-րդ հոդվածների համաձայն, կանխման ընդհանուր սկզբունքների ստորակարգությունը:

7. Գործատուները և աշխատողների ներկայացուցիչները աշխատում են պատշաճ մակարդակում ռիսկերը վերացնելու և դրանք կանխելու, աշխատողների առողջությունն ու անվտանգությունը պահպանելու և ապահով աշխատանքային միջավայր ստեղծելու համար, այդ թվում՝ անվտանգ սարքերի ընտրության և կիրառման, վերապատրաստումները լավագույնս իրականացնելու, տեղեկատվության և իրազեկման բարձրացման հարցերով խորհրդակցություններ անցկացնելու միջոցով:

8. Անհրաժեշտ է տեղեկությունների տրամադրման և խորհրդակցությունների միջոցով նախաձեռնել գործողություններ՝ ազգային իրավունքի և (կամ) կոլեկտիվ համաձայնագրերի համաձայն:

9. Իրազեկման բարձրացման միջոցների արդյունավետությունը գործատուների, աշխատողների և նրանց ներկայացուցիչների համատեղ պարտականությունն է:

10. Հնարավորինս անվտանգ աշխատատեղ ստեղծելու համար կարևոր է համատեղել պլանավորումը, իրազեկման բարձրացումը, տեղեկությունների տրամադրումը, վերապատրաստումը, կանխումը և կիրառված միջոցների դիտանցումը:

11. Խթանել «մեղավորներ չկան» մշակույթը: Պատահարների մասին հաշվետվություն ներկայացնելու ընթացակարգը պետք է անդրադառնա համակարգային բնույթ ունեցող գործոններին՝ առանձին սխալների փոխարեն: Պարբերական հաշվետվությունները պետք է դառնան ընդունելի ընթացակարգ:

## **Դրույթ 5. Ռիսկի գնահատումը**

1. Ռիսկի գնահատման ընթացակարգերն իրականացվում են 2000/54/ԵՀ հրահանգի 3-րդ և 6-րդ հոդվածների ու 89/391/ԵՏՀ հրահանգի 6-րդ և 9-րդ հոդվածների համաձայն:

2. Ռիսկի գնահատման մաս են կազմում ներգործության սահմանումը, ռեսուրսներով լավ համալրված և կազմակերպված աշխատանքային միջավայրի կարևորության ըմբռնումը, ինչպես նաև այն բոլոր իրավիճակները, որոնց դեպքում կա վնասվածք, արյուն կամ պոտենցիալ այլ վարակիչ նյութ:

3. Ռիսկի գնահատման ընթացքում հաշվի են առնվում տեխնոլոգիան, աշխատանքի կազմակերպումը, աշխատանքային պայմանները, աշխատողների որակավորման մակարդակը, աշխատանքին առնչվող

հոգեբանական–սոցիալական գործոնները և աշխատանքային միջավայրին առնչվող գործոնների ազդեցությունը: Գնահատմամբ պետք է՝

– սահմանվի, թե ինչպես կարելի է վերացնել ներգործությունը.

– հաշվի առնվի հնարավոր այլընտրանքային համակարգերը:

## **Դրույթ 6. Ռիսկի վերացումը, կանխումը և ռիսկից պաշտպանությունը**

1. Եթե ռիսկի գնահատման արդյունքում հայտնաբերվում է սուր գործիքներից վնասվածքներ ստանալու և (կամ) վարակի ռիսկ, ապա աշխատողները չպետք է ենթարկվեն նման ներգործության հետևյալ միջոցները ձեռնարկելու միջոցով՝ առանց խախտելու դրանց հերթականությունը.

– անվտանգ ընթացակարգերի սահմանում և կիրառում՝ բժշկական սուր գործիքների օգտագործման և դրանցից ձերբազատման, ինչպես նաև թունավոր աղբի հեռացման համար: Այս ընթացակարգերը պարբերաբար վերազնահատվում են և կազմում են Ց-րդ կետում նշված աշխատողներին տեղեկությունների տրամադրման և նրանց վերապատրաստմանն ուղղված միջոցների անբաժանելի մասը.

– սուր գործիքների անտեղի օգտագործման վերացում՝ պրակտիկայում փոփոխություններ մտցնելու միջոցով՝ հիմնվելով ռիսկի գնահատման արդյունքների վրա. անվտանգության գծով նախագծված պաշտպանիչ մեխանիզմներ կիրառող բժշկական սարքերի տրամադրում.

- արգելել ներարկիչների կրկնակի օգտագործումը: Արգելքն ուժի մեջ է մտնում առանց հապաղման.

2. Հաշվի առնելով գործունեության և ռիսկի գնահատումը՝ ներգործության ռիսկը պետք է նվազեցվի հնարավորության սահմաններում՝ համապատասխան աշխատողների անվտանգությունն ու առողջությունը բավարար չափով պաշտպանելու համար: Ռիսկի գնահատման արդյունքների համատեքստում պետք է կիրառվեն հետևյալ միջոցները՝

– կիրառել աղբի հեռացման արդյունավետ ընթացակարգեր և միանգամյա օգտագործման բժշկական սուր գործիքներից ու ներարկման գործիքներից ձերբազատման համար նախատեսված հստակ

մակագրված և տեխնիկապես ապահով տարաներ հնարավորինս մոտ տեղադրել այն վայրերում, որտեղ օգտագործվում կամ գտնվում են նման գործիքները.

– կանխել վարակի փոխանցման ռիսկը աշխատավայրում՝ կիրառելով ապահով համակարգեր հետևյալի միջոցով՝

ա) համապարփակ կանխիչ քաղաքականության մշակում, որը կընդգրկի տեխնոլոգիային, աշխատանքի կազմակերպմանը, աշխատանքային պայմաններին, աշխատանքին առնչվող հոգեբանական–սոցիալական գործոններին, ինչպես նաև աշխատանքային միջավայրին առնչվող գործոնների ազդեցությանն առնչվող կողմերը,

բ) վերապատրաստման անցկացում,

գ) առողջության հետազոտման ընթացակարգերի իրականացում՝ 2000/54/ԵՀ հրահանգի 14-րդ հոդվածի համաձայն,

– անհատական պաշտպանության միջոցների օգտագործում:

3. Եթե 5-րդ դրույթում նշված գնահատման արդյունքում բացահայտվում է, որ աշխատողների անվտանգությունն ու առողջությունը կարող է ռիսկի ենթարկվել կենսաբանական ազդակների ներգործությամբ, որոնց համար գոյություն ունեն պատվաստման արդյունավետ միջոցներ, ապա աշխատողներին առաջարկվում է պատվաստում անցնել:

4. պատվաստումը և, հարկ եղած դեպքում՝ կրկնակի պատվաստումը, իրականացվում է ազգային իրավունքի և (կամ) գործելակերպի համաձայն՝ ներառյալ պատվաստումների տեսակը որոշելը.

– աշխատողները տեղեկացվում են պատվաստում անցնելու և չանցնելու օգուտների և վնասների մասին.

– պատվաստումը պետք է առաջարկվի անվճար՝ բոլոր աշխատողների և ուսանողների համար, ովքեր աշխատավայրում առողջապահական և նման այլ ծառայություններ են մատուցում :

## **Դրույթ 7. Տեղեկատվության տրամադրումը և իրազեկման բարձրացումը**

Քանի որ սուր գործիքները համարվում են աշխատանքային սարքեր՝ 89/655/ԵՏՀ [8] հրահանգի իմաստով, գործատուն պարտավոր է նախաձեռնել հետևյալ միջոցները, ի լրումն 89/655/ԵՏՀ հրահանգի՝ 6-րդ հոդվածում սահմանված կարգով աշխատողներին տեղեկություններ և գրավոր հրահանգներ տրամադրելուն՝

- շեշտել, որ գոյություն ունեն տարաբնույթ ռիսկեր.
- ուղղորդել առկա օրենսդրության վերաբերյալ..
- խրախուսել պատահարների/միջադեպերի կանխման և դրանց արձանագրման լավագույն պրակտիկան.
- բարձրացնել իրազեկումը՝ արհմիությունների և (կամ) աշխատողների ներկայացուցիչների հետ փոխգործակցության պայմաններում մշակելով գործողություններ և գովազդային նյութեր.
- տեղեկություններ տրամադրել աջակցման առկա ծրագրերի վերաբերյալ:

## **Դրույթ 8. Վերապատրաստումը**

Ի լրումն 2000/54/ԵՀ հրահանգի 9-րդ հոդվածում սահմանված միջոցների՝ համապատասխան վերապատրաստում պետք է անցկացվի բժշկական սուր գործիքներից ստացված վնասվածքներին առնչվող ռազմավարության ու ընթացակարգերի վերաբերյալ՝ ներառյալ

- բժշկական սարքերի ճիշտ օգտագործումը՝ կիրառելով բժշկական սուր գործիքների ներգործության պաշտպանիչ մեխանիզմները.
- ծանոթացում նոր և ժամանակավոր բոլոր աշխատողների համար.
- արյան և օրգանիզմի հեղուկային զանգվածի վրա ներգործությանն առնչվող ռիսկ.
- կանխիչ միջոցներ, այդ թվում՝ նախազգուշական միջոցներ, աշխատանքի անվտանգ համակարգեր, ճիշտ օգտագործման և հեռացման/ձերբազատման ընթացակարգեր, վարակի հանդեպ

անընկալունակ դարձնելու անհրաժեշտությունը՝ համաձայն աշխատավայրում գործող ընթացակարգերի.

– հաշվետվության, արձագանքման և դիտանցման ընթացակարգեր և դրանց կարևորությունը.

– վնասվածք ստանալու դեպքում կիրառվող միջոցները:

Գործատուները պետք է կազմակերպեն և վերապատրաստում անցկացնեն աշխատողների համար, որը նրանց համար պարտադիր է լինելու: Գործատուներն աշխատանքից բացակայելու թույլտվություն պետք է տան այն աշխատողներին, ովքեր պարտավոր են վերապատրաստում անցնել: Վերապատրաստումն անցկացվում է պարբերաբար՝ հաշվի առնելով դիտանցման, արդիականացման և բարելավման արդյունքները:

### **Դրույթ 9. Հաշվետվությունները ներկայացնելը**

1. Այն ներառում է հաշվետվության գործող ընթացակարգերի վերանայում առողջության ու անվտանգության հարցերով ներկայացուցիչների և (կամ) համապատասխան գործատուների/աշխատողների ներկայացուցիչների հետ: Հաշվետվության մեխանիզմները պետք է պարունակեն տարածքային, ազգային և համաեվրոպական համակարգեր:

2. Աշխատողները պարտավոր են գործատուին և (կամ) պատասխանատու անձին և (կամ) անվտանգության ու առողջության գծով պատասխանատու անձին հայտնել ցանկացած պատահարի կամ միջադեպի մասին, որի ընթացքում կիրառվել են սուր գործիքներ:

### **Դրույթ 10. Արձագանքը և հետագա գործողությունները**

Սուր գործիքից ստացված վնասվածքի դեպքում պետք է կիրառվեն համապատասխան ուղեգծեր և ընթացակարգեր: Բոլոր աշխատողները պետք է տեղյակ լինեն նման ուղեգծերի և ընթացակարգերի մասին: Տեղեկացումը պետք է կատարվի եվրոպական, ազգային/տարածաշրջանային օրենսդրության և կոլեկտիվ պայմանագրերի հիման վրա՝ ըստ անհրաժեշտության:

Մասնավորապես, պետք է ձեռնարկվեն հետևյալ գործողությունները՝

– գործատուն անհապաղ քայլեր է ձեռնարկում՝ վնասվածք ստացած աշխատողի խնամքի համար, այդ թվում՝ ներգործությունից հետո պրոֆիլակտիկա և բժշկական անհրաժեշտ հետազոտումներ է ապահովում, եթե բժշկական տեսանկյունից նման անհրաժեշտություն կա, ինչպես նաև ապահովում է համապատասխան բժշկական հետազոտություն՝ 6(2)(գ) կետի համաձայն:

– գործատուն հետաքննում է պատահարի/միջադեպի պատճառները և հանգամանքները, հարկ եղած դեպքում՝ ձեռնարկելով անհրաժեշտ գործողություն: Աշխատողը պետք է համապատասխան տեղեկություններ տրամադրի՝ ճիշտ ժամանակին պատահարի/միջադեպի մանրամասների վերաբերյալ ամբողջական տվյալներ ներկայացնելու նպատակով:

– գործատուն վնասվածք ստանալու դեպքում պետք է հաշվի առնի հետևյալ քայլերը, այդ թվում՝ աշխատողներին հարկ եղած դեպքում խորհրդատվություն տրամադրելը և բուժօգնություն երաշխավորելը: Վերականգնումը, աշխատանքի շարունակումը և փոխհատուցումն իրականացվում է ազգային և (կամ) ոլորտային պայմանագրերի կամ օրենսդրության համաձայն:

Վնասվածքի վերաբերյալ տեղեկությունների, ախտորոշման և բուժման գաղտնիությունը հույժ կարևոր է և պետք է պահպանվի:

## **Դրույթ 11. Կիրարկումը**

Սույն համաձայնագիրը չպետք է հակասի գործող կամ ազգային կամ Համայնքի հետագա դրույթներին [9], որոնք բժշկական սուր գործիքներից ստացված վնասվածքներից աշխատողների պաշտպանության համար ավելի նպաստավոր են:

Ստորագրող կողմերը Հանձնաժողովից պահանջում են սույն շրջանակային համաձայնագիրը ներկայացնել Խորհուրդ՝ վերջինիս կողմից որոշում կայացնելու համար այն մասին, որ սույն պայմանագիրը պարտադիր է Եվրոպական միության անդամ պետություններում:

Խորհրդի որոշմամբ Եվրոպական մակարդակում կիրառվելու դեպքում և չհակասելով Հանձնաժողովի, ազգային դատարանների և Արդարադատության Եվրոպական դատարանի համապատասխան դերին, Հանձնաժողովը կարող է դիմել ստորագրող կողմերին՝ սույն համաձայնագիրը մեկնաբանելու համար, որպեսզի նրանք հանդես գան իրենց եզրակացությամբ:



Ստորագրող կողմերը վերանայում են սույն համաձայնագրի կիրարկումը Խորհրդի կողմից որոշում կայացնելուց հինգ տարի հետո, եթե նման պահանջ ներկայացվում է համաձայնագրի կողմերից որևէ մեկի կողմից:

Բրյուսել, 2009 թվականի հուլիսի 17